

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 81-110 (3)

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

ք. Երևան

14 դեկտեմբերի 2005 թվական

Նախագահում էր՝

Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ՝ խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Ա. Հակոբյան - ՀՀ վարչապետի խորհրդական
- Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության պետ՝ խորհրդի քարտուղար
- Տ. Դավթյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ
- Ա. Ավետիսյան - ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
- Վ. Առաքելյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Յու. Շուքրյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Գ. Զուգասյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ
- Ռ. Աթոյան - «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Է. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
- Ա. Մխիթարյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն

Հրավիրվածներ՝

- Ա. Կիրակոսյան - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
- Ն. Մկրտչյան - ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային տնտեսական

- համագործակցության վարչության պետ
- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
- Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության պետ
- Պ. Դեմիրճյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
- Ս. Խանազադյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչության գլխավոր մասնագետ
- Դ. Սանդուխյան - «Ինտերնյուս» հասարակական կազմակերպություն, ծրագրի համակարգող
- Մ. Մարկոսյան - «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
- Կ. Հարությունյան - «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն
- Ա. Բալդրյան - «Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Ռ. Մկրտչյան - «Վեբ» ՍՊԸ-ի նախագահ
- Ա. Քալանթարյան - «Ալկատել Թրեյդ Ինտերնեյշնլ ԷլՋի» ներկայացուցչության տնօրեն
- Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
- Մ. Փափազյան - «Կրթություն հանուն զարգացման» կրթական և բարեսիրական հիմնադրամի նախագահ,
- Հ. Մուսայելյան - «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
- Կ. Վարդանյան - «SS ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն,
- Լ. Մինասյան - Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի գործադիր տնօրեն,
- Ա. Քուչուկյան - «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժեներ
- Ս. Մանուկյան - «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
- Ա. Մայիլյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ
- Հ. Ավոյան - «Լայքս» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Ն. Հան - «CAPS» ծրագրում մրցունակության ավագ փորձագետ
- Լ. Խաչատրյան - թարգմանիչ
- Ա. Հայրիյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական

- տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Մկրտչյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

Ա. Հակոբյան

Ա. Գրիգորյան

Ա. Կիրակոսյան

Ա. Ավետիսյան

2. Թունիսում կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովի արդյունքների ամփոփում

Ա. Հակոբյան

Գ. Չուգասյան

3. 2006 թվականին Հայաստանում անցկացվելիք էլ. բովանդակության Համաշխարհային Գագաթաժողովի և տարածաշրջանային հաղթողների համար Գալա միջոցառման կազմակերպման մասին

Գ. Չուգասյան

4. Այլ հարցեր

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

-----  
(Ա. Գրիգորյան« Ա. Հակոբյան, Ա. Մարգարյան)

1. Ընդունել ի գիտություն Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանի և ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը՝ խորհրդի նախորդ նիստում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մասին:

2. ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝

ա) մինչև 2005 թվականի դեկտեմբերի 30-ը կազմակերպել քննարկումներ շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ աշխատանքային խմբերի վերաձևավորման և գործառույթների մասին, հավաքագրել առաջարկներ, ամփոփել և ներկայացնել ՀՀ վարչապետին:

բ) 2006 թվականի հունվարի վերջին տասնօրյակում հրավիրել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստ՝ օրակարգում ընդգրկելով աշխատանքային խմբերի կազմի և գործառույթների հաստատման հարցերը:

2. Թունիսում կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային  
գագաթաժողովի արդյունքների ամփոփում

(Ա. Գրիգորյան, Ա. Կիրակոսյան, Ա. Հակոբյան, Գ. Չուգասյան, Բ. Ենգիբարյան, Կ. Վարդանյան, Տ. Դավթյան, Ա. Քալանթարյան, Ա. Բալդրյան, Ա. Մարգարյան)

3.

ա) Բարձր գնահատել Թունիսում կայացած Տեղեկատվական հասարակության համաշխարհային գագաթաժողովում ՀՀ պատվիրակության կողմից կատարված աշխատանքների արդյունքները:

բ) ՀՀ պատվիրակության այցը բարձր մակարդակով կազմակերպելու համար հատուկ շնորհակալություն հայտնել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարությանը, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամին, Ինտերնետ Տեխնոլոգիաների Հիմնադրամին:

գ) ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանին՝ կազմակերպել հանդիպումներ շահագրգիռ ընկերությունների, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ Թունիսում կայացած «Ալկասեյ», «ԻնՏեյ» և «Սան» ընկերությունների հետ հանդիպումների ժամանակ ձեռք բերված համաձայնությունների հետագա ընթացքի հստակեցման համար և արդյունքների մասին

պարբերաբար տեղեկացնել խորհրդին:

3. 2006 թվականի Հայաստանում անցկացվելիք էլ. բովանդակության Համաշխարհային Գազաթաժողովի և տարածաշրջանային հաղթողների համար Գալա միջոցառման կազմակերպման մասին

-----  
-----  
(Ա. Գրիգորյան« Գ. Չուգասզյան, Բ. Ենգիբարյան, Կ. Վարդանյան, Հ. Մուսայելյան Ա. Մարգարյան)

4. ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանին, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին, Ինտերնետ Տեխնոլոգիաների Հիմնադրամի նախագահ Գ. Չուգասզյանին և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանին` 2006 թվականի սեպտեմբեր - հոկտեմբեր ամիսներին Հայաստանում «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» կազմակերպելու նպատակով`

ա) նախապատրաստել նախագիծ «Տեղեկատվական Տեխնոլոգիաների ամիսը» համակարգող հանձնաժողովի վերաբերյալ, մշակել միջոցառումների ծրագիր, ժամանակացույց և ներկայացնել հաջորդ նիստի հաստատմանը.

բ) ՀՀ էլ-բովանդակության ազգային մրցանակաբաշխության, Համաշխարհային Գազաթաժողովի և տարածաշրջանային հաղթողների համար Գալա միջոցառման կազմակերպման համար Ինտերնետ Տեխնոլոգիաների Հիմնադրամի նախագահ Գ. Չուգասզյանի գլխավորությամբ ստեղծել աշխատանքային խումբ, գործողությունների ծրագիր և ներկայացնել հաջորդ նիստում:

4. Այլ հարցեր

-----  
(Ա. Գրիգորյան« Ռ. Սկրտչյան, Վ. Առաքելյան, Ն. Հան, Դ. Սանդուխյան, Յու. Շուքուրյան, Ա. Քուչուկյան, Բ. Ենգիբարյան, Ա. Մարգարյան)

5. Հայտարարություններով հանդես եկան Ռ. Սկրտչյանը, Ն. Հանը, Յու. Շուքուրյանը, Դ. Սանդուխյանը և Ա. Քուչուկյանը:

Խորհրդի նախագահ,  
ՀՀ վարչապետ

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Մարգարյան

Խորհրդի քարտուղար

Մ Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա. Գրիգորյան